

Միլոմելեանը եւ Հայաստանը (2016) ժողովածուները: Հրատարակել է նաեւ երկու վէպ՝ Ովսաննա-օրինություն առ Աստուած (2003) եւ Մատարո (2019):
Սերգէյ Գալստեանը մահացաւ 2022ի Օգոստոսի 26ին, Երեւանում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com



ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1930-2022)


Գրականագէտ պրոֆեսոր Արամ Գրիգորեանը ծնունդ է 28 Սեպտեմբեր 1930ին, Թիֆլիս:

1953ին աւարտել է ԵՊՀ: 1958-63՝ Մանուկ Աբեղեանի անուան գրականության ինստիտուտի (ՄԱԳԻ) գիտաշխատող, 1964-71՝ աւագ գիտաշխատող, 1989-94՝ փոխտնօրէն, 1994ից ՄԱԳԻ խմբի ղեկավար: 1979-88՝ եղել է Հայաստանի Գրողների միության քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր՝ 1970ին, 1996ին ընտրուել է ակադեմիկոս, 2000-4՝ ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: 1967ից անդամ՝ Հայաստանի եւ ԽՍՀՄ Գրողների միությանց: Դասաւանդել է Հայ-Ռուսական համալսարանում. այնտեղ 2003ից գիտական ղեկավարն էր Ռուսական բանասիրության ինստիտուտին եւ անդամ՝ ՌՀՀ բանքերի խմբագրական-հրատարակչական խորհրդին:

Գրիգորեանի հիմնական աշխատությունները վերաբերում են գրականության տեսությանը, հայ գրականության պատմությանը եւ ազգային առանձնայատկություններին: Նրա ւեյլի քան հարիւր յօդուածները լոյս են տեսել գիտական եւ գրական տարբեր պարբերականներում, նաեւ՝ մոսկովեան Վոպրոսի լիւերալուրի, Դրուժբա նարոդով, Լիւերալուրնայա գազետա, Սովետսկայա կուլտուրա եւն.: Ունի բազմաթիւ ուսումնասիրություններ ակադեմիական տարբեր հատորեակներում, ինչպէս՝ Խորհրդային բազմազգ գրականության պատմություն, Հայ գրականության պատմություն եւ այլ հատորաշարքերում: Խմբագրել է բազում գրքեր, համահեղինակ է մի շարք ռուսերէն եւ հայերէն գրքերի, ինչպէս՝ Գեղարուեստական ոճի եւ պարկերի կառուցուածքը (ռուսերէն, 1974), Աւանդոյթները եւ գեղարուեստական զարգացումը (1976), Սովետահայ գրականության պոեզիական. գրական-տեսական ուսումնասիրություններ (1980), Եղիշէ Չարենցը եւ 1920ական թուականների սովետահայ պոեզիան (1983), Հայ գրականության ազգային առանձնայատկությունները (2003), Հայոց նորագոյն գրականություն. պատմության ուրուագիծ (2004): Հեղինակ է Քննադատությունը եւ գրական պրոցէսը. օգնություն դասախօսին (1979), Գրական երկի կառուցուածքի վերլուծությունը (ռուսերէն, 1984), Ոճային որոնումները եւ

գրական զարգացումը (ռուսերէն, 1987), Գրական երկի ամբողջականութիւնը (ռուսերէն, 2004) հատորներին:

Արամ Գրիգորեանը մահացաւ 5 Մարտ 2022ին, Երեւան:



ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ
(1941–2022)

Լիբանանահայ հայագէտ-բանասէր, մշակութային գործիչ, գրադարանագէտ, խմբագիր եւ հրատարակիչ, լրագրութեան պատմաբան, մատենագէտ, մանկավարժ, ՀՀԳԱԱ պատուաւոր դոկտոր Ժիրայր Դանիէլեան ծնած է 1941ին, Ճիւնի, Լիբանան:

Յաճախած է Պէյրութի Վիեննական միսիթարեան, եւ ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան վարժարանները: Հայկազեան քոլէճին մէջ (այժմ՝ համալսարան) հետեւած է պատմութեան եւ մանկավարժութեան: Ան քսաներեք տարի պաշտօնավարեց Հայկազեան համալսարանին մէջ՝ իբրեւ հայագիտական գրադարանի վարիչ, ապա՝ իբրեւ գրադարանապետ: Այնուհետեւ Դանիէլեան ստանձնեց տնօրէնի պաշտօն՝ ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան եւ Դարուի Յակոբեան երկրորդական վարժարաններուն մէջ:

1992-99՝ Դանիէլեան անդամ էր Հայկազեան հայագիտական հանդէսի խմբագրակազմին, իսկ 2000-22՝ անոր խորհրդատուներու մարմնին: Ան անդամ էր նաեւ Հիւսիսեան հայագիտական եւ Հասկ հայագիտական տարեգիրքերուն, Երիտասարդ հային, ՀԲԸՄի Խօսնակ պաշտօնաթերթին եւ Ճիրակ ամսագրին:

Ստորագրած է բազմաթիւ յօդուածներ՝ *Զարթօնք*, *Արարալ*, *Ազդակ* օրաթերթերուն, *Սփիւռք* եւ *Նայիրի* շաբաթաթերթերուն մէջ: 2005ին կը հիմնադրէ Կամար գրական պարբերաթերթը, որուն պատասխանատու խմբագրի պաշտօնը կը ստանձնէ մինչեւ իր մահը: 2015-21՝ կը վարէ մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հայագիտական հիմնարկը:

Հեղինակ է շարք մը բանասիրական գիրքերու եւ ուսումնասիրութիւններու.- *Հայ մամուլի հաւաքածոյ* (1974, վերահրատ.՝ 1981), *Ռամկավար ազգայական մամուլը* (1982), *Նահանջը առանց երգի՞ն իբրեւ վկայութիւն* (1983), *Հայ նոր պարբերական մամուլը, 1967-1981* (1984), *Լիբանանահայ տպագրութիւնը պատերազմի տարիներուն. 1975-1984* (1986), *Բանասիրական որոնումներ* (1997), *Լիբանանահայ դպրոցը. թիւեր եւ մտորումներ* (2002), *Գրական որոնումներ* (2007), *Բանասիրութեան բախողներուն մէջ* (2011), *Մատենագիտութիւնը ընդդէմ ցանկազրումի. 'Լիբանանահայ գիրքը...' յաւելումներ, մատենանշումներ, սրբագրութիւններ եւ անհրաժեշտ ցանկեր*